ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 հունիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

82
(3291)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ

ArmLur.am-ի հետ զրույցում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանը նշել է, որ ինքը (Գագիկ Մելքոնյանը) 3 տարի առաջ փորձել է միջնորդել, որ տեղի ունենա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարգեին Բ-ի եւ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը, որպեսզի առկա տարաձայնությունները հարթվեն: Միջնորդության համար, ինչպես նա է ասել, դիմել է նաեւ Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել արքեպիսկոպոս Քյարամյանին: Վերջինս էլ համաձայնել է այդ խնդրով դիմել Վեհափառ Հայրապետին: Գագիկ Մելքոնյանի խոսքով՝ Փաշինյանը համաձայն է եղել, համաձայնել է նաեւ Վեհափառ Հայրապետը, սակայն մեկ օր անց Կաթողիկոսը հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ մինչեւ դպրոցներում չվերականգնվի Հայոց եկեղեցու պատմություն առարկան, ինքը չի հանդիպելու Նիկոլ Փաշինյանի հետ: Գագիկ Մելքոնյանը նաեւ նշել է, որ իբրեւ Ամենայն Հայոց Հայրապետին ուղղորդել են, որ հրաժարվի հանդիպումից:

Նման հանդիպման առաջարկ արդյո՞ք ստացել է Ամենայն Հայոց Հայրապետը, թե՞ Գագիկ Մելքոնյանն ուղղակիորեն հանդես է եկել քաղաքական հայտարարությամբ: ArmLur.am-ի այս հարցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Տեր Եսայի ավագ քահանա Արթենյանը փոխանցեց հետեւյալը. «Ամենայն Հայոց Կաթողիկոսը երբեք կառուցողական հանդիպմանը դեմ չի եղել: Ինչ վերաբերում է հարցազրույցի մնացյալ հատվածին, ապա դրանում տեղ գտած դիտարկումները որեւէ աղերս չունեն իրականության հետ: Աղավաղված տեղեկատվություն եւ կեղծ թեզեր են, որ շրջանառվում են իշխող ուժի ներկայացուցիչների կողմից»:

Թեեւ ՀՀ Սահմանադրական դատարանը դեռ չի սկսել հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքների վիճարկման գործի քննությունը, իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում արդեն ակտիվ պայքար է ընթանում նոր Ազգային Ժողովի ղեկավար կազմի ձեւավորման շուրջ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը թիմակիցներին հայտնել է, որ գործադիր իշխանության կազմին եւ նախարարական նշանակումների հարցերին կանդրադառնան հուլիսին: Կուսակցության ներսում այս օրերին առաջնահերթ է դարձել Ազգային Ժողովի նախագահի թեկնածուի ընտրությունը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ կայացած ՔՊ վարչության դռնփակ նիստում ավարտվել է առաջադրումների փուլը: Վարչության երեք անդամ առաջադրվել են ԱԺ նախագահի թեկնածուի պաշտոնում՝ գործող նախագահ Ալեն Սիմոնյանը, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը: Մեր տեղեկություններով՝ հինգշաբթի օրը ՔՊ վարչությունը կրկին նիստ կհրավիրի, որի ընթացքում արդեն բաց քվեարկությամբ կորոշվի, թե ով է լինելու իշխող ուժի թեկնածուն Ազգային Ժողովի նախագահի պաշտոնում: Թեեւ պաշտոնապես պայքարում են երեք թեկնածուներ, այնուամենայնիվ, իրական մրցակցությունը ծավալվում է Ալեն Սիմոնյանի եւ Ռուբեն Ռուբինյանի միջեւ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



Երեւանի ավագանու նախորդ օրվա միջադեպը սկսվել էր այն բանից հետո, երբ Երեւանի առաջին փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանը կոշտ եւ վիրավորական տոնով դիմել էր ընդդիմադիր ավագանու անդամներին: Այս աղմկահարույց միջադեպի ֆոնին ArmLur.am-ը ուսումնասիրել է, թե ինչ գույք, եկամուտներ եւ ֆինանսական միջոցներ է հայտարարագրել Երեւանի առաջին փոխքաղաքապետը վերջին տարիներին: 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Արմեն Փամբուխչյանը ունի երկու բնակարան Երեւանի Էրեբունի վարչական շրջանում: Դրանցից մեկը ձեռք է բերել 2017 թվականին, մյուսը՝ 2022 թվականին: Տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նրա բանկային հաշիվներից մեկում տարվա սկզբին եղել է 29.5 մլն դրամ, իսկ տարեվերջին՝ արդեն 35.7 մլն դրամ: Միաժամանակ 8.800 եվրո մնացորդ ունեցող հաշիվը փակվել է կամ զրոյացվել: Կանխիկ միջոցները նույնպես աճել են. 13.650 դոլարը դարձել է 16.850 դոլար, իսկ 3.5 մլն դրամը՝ 4 մլն 471 հազար դրամ: Հետաքրքրական է, որ 2024 թվականին հայտարարագրված 15 հազար միավոր Fasttoken կրիպտոակտիվը 2025 թվականի վերջում այլեւս առկա չէ: Հայտարարագրում նշված չէ՝ այն վաճառվել է, փոխանցվել, թե այլ կերպ օտարվել, մինչդեռ պարտավոր էր բացատրել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում



Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամներ Արշակ Սարգսյանը, Մեսրոպ Մանուկյանը եւ Արմենակ Դանիելյանը շարունակում են մնալ խմբակցության կազմում, թեեւ 2026 թվականի Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցել են ոչ թե «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ ձեւավորված «Առաջարկ Հայաստանին» նախաձեռնության շրջանակում, այլ «Հայաստան» դաշինքի ցուցակով: Հիշեցնենք, որ «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար Մանուկ Սուքիասյանը մայիսի 7-ին ֆեյսբուքյան իր էջում գրել էր. «Հարգելի՛ հայրենակիցներ, «Մայր Հայաստանը» խորհրդարանական ընտրություններին մասնակցում է «Առաջարկ Հայաստանին» ծրագրով՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ: Ավագանու այն անդամները, ովքեր «Մայր Հայաստան» դաշինքով են մանդատ ստացել եւ դարձել համանուն խմբակցության անդամ, սակայն ԱԺ ընտրություններին մասնակցում են այլ ձեւաչափով, այլ քաղաքական ուժի ցուցակով կամ շարքերում, չեն ներկայացնում «Մայր Հայաստանին» եւ այլեւս որեւէ կապ չունեն մեր հետ»: Նշենք, որ Արշակ Սարգսյանը, Մեսրոպ Մանուկյանը, Արմենակ Դանիելյանը եւ Սամվել Հակոբյանը, լինելով «Մայր Հայաստան» քաղաքական ուժի ներկայացուցիչներ, ԱԺ ընտրություններին մասնակցել են «Հայաստան» դաշինքի կազմում: Նրանցից միայն Սամվել Հակոբյանն է վայր դրել ավագանու մանդատն ու դուրս եկել խմբակցությունից, մինչդեռ մյուս երեքը շարունակում են գործունեությունը Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ԴԱՏԱՐԱՆԻՑ ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՆՔ ԱՐԴԱՐ ՈՐՈՇՈՒՄ»

ArmLur.am-ը զրուցել է Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գեւորգ Ստեփանյանի հետ:

- Պարոն Ստեփանյան, Երեւանի ավագանու վերջին նիստն է: Կխնդրեի ամփոփել՝ լուծված եւ չլուծված ինչ խնդիրներով է ավագանին ավարտում իր աշխատանքը:

- Ինչպես ցանկացած ավագանու նիստ, որտեղ իշխանությունը գտնվում է ոչ լեգիտիմ փոքրամասնության ձեռքում, այս անգամ եւս օրակարգում ընդգրկված էր 46 հարց, որոնցից 45-ը չզեկուցվեցին: Սա արդեն դարձել է սովորական պրակտիկա՝ երեւանցիներից թաքցնել իրական որոշումները: Այդ հարցերի մեծ մասը վերաբերում էր շինթույլտվություններին, բազմաբնակարան շենքերի կառուցմանը եւ այլ նախագծերի: Նրանք չեն ցանկանում, որ երեւանցին իմանա, թե ինչի մասին է խոսքը, որովհետեւ հենց այդ ոլորտներում են կենտրոնացած ֆինանսական շահերը: Մինչդեռ դուրս եկեք քաղաք եւ տեսեք իրական պատկերը՝ խցանումներ, ենթակառուցվածքային խնդիրներ եւ բազմաթիվ չլուծված հարցեր:

- Դուք նախկինում խոսել էիք Կենտրոն վարչական շրջան մեքենաների մուտքի սահմանափակման հնարավորության մասին: Ի՞նչ կարող եք ասել այժմ:

- Մոտ 6-7 ամիս առաջ իմ ֆեյսբուքյան էջում տեղեկություն էի հրապարակել, որ ըստ որոշ աղբյուրների՝ Տիգրան Ավինյանը եւ «Քաղաքացիական պայմանագիրը» քննարկում են Կենտրոն վարչական շրջան անձնական մեքենաների մուտքը սահմանափակելու կամ դրա համար բարձր վճար սահմանելու տարբերակը: Այդ ժամանակ նրանք հերքում էին այդ տեղեկությունը, սակայն մի քանի օր առաջ փաստացի հաստատվեց, որ նման ծրագրեր իսկապես քննարկվում են: Ստացվում է, որ նախ թանկացրին տրանսպորտը, հետո խոսում են նոր սահմանափակումների մասին՝ քաղաքացիներին ստիպելով օգտվել իրենց «բարեփոխված» հանրային տրանսպորտից:

- Անդրադառնանք հետընտրական գործընթացներին: Ի՞նչ է պատրաստվում անել «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը: Սպասելո՞ւ եք Սահմանադրական դատարանի որոշմանը:

- Հունիսի 7-ի ընտրությունների գիշերը դեռ քվեների հաշվարկն ավարտված չէր, երբ «Քաղաքացիական պայմանագիրը» արդեն հայտարարեց իր հաղթանակի մասին: Նրանք ամիսներ շարունակ խոսում էին 65 տոկոս աջակցության մասին, սակայն նույնիսկ պաշտոնական տվյալներով այդ ցուցանիշին չհասան: Սկզբում հայտարարվեց, որ «-Բարգավաճ Հայաստանը» հաղթահարել է անցողիկ շեմը, ապա երկու ժամանց ասվեց, որ չի հաղթահարել: Այնուհետեւ հայտարարվեց, որ երեք ընտրատեղամասերի արդյունքները չեն հաշվարկվելու՝ զինվորների մասնակցության հետ կապված պատճառաբանությամբ: Սակայն հարց է առաջանում՝ ընդդիմությունն ինչպե՞ս կարող էր ազդել զորամասերից զինվորների մասնակցության վրա: Ոչ մի ընդդիմադիր գործիչ չի կարող զորամաս մտնել եւ կազմակերպել զինվորների քվեարկությունը:

- Բայց դուք եւս պահանջո՞ւմ էիք, որ այդ երեք ընտրատեղամասերում արդյունքները անվավեր ճանաչվեն:

- Այո՛, որովհետեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ինքն էր արձանագրել, որ այնտեղ տեղի են ունեցել խախտումներ: Եթե ընտրատեղամասերը ճանաչվում են անվավեր, ապա օրենքը պահանջում է վերաքվեարկություն կազմակերպել: Փոխարենը որոշվեց պարզապես չհաշվել ավելի քան 3000 քաղաքացու ձայնը: Սա, մեր գնահատմամբ, ապօրինություն է, որովհետեւ այդ քաղաքացիները մասնակցել էին իշխանություն ձեւավորելու գործընթացին, եւ նրանց ձայները չեն կարող պարզապես անտեսվել:

- Դուք բազմիցս հայտարարել եք, որ դատական համակարգն անկախ չէ: Այդ դեպքում ինչո՞ւ որոշեցիք դիմել Սահմանադրական դատարան:

- Նախ՝ հիշեցնեմ, որ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ է, երբ համապետական ընտրություններից հետո միանգամից յոթ քաղաքական ուժ դիմում է Սահմանադրական դատարան: Սա արդեն իսկ ցույց է տալիս, որ ընտրական գործընթացի նկատմամբ լուրջ անվստահություն կա: Մենք դատարանից ակնկալում ենք արդար որոշում՝ կամ վերաքվեարկության կազմակերպում, կամ այդ քաղաքացիների ձայների հաշվառում: Հունիսի 26-ին սկսվում է գործի քննությունը: Սպասենք դատարանի որոշմանը, եւ դրանից հետո կհայտարարենք մեր հետագա քայլերի մասին:

- Ընդդիմադիր որոշ ուժեր, այդ թվում Սամվել Կարապետյանը, հանդես են եկել համախմբման կոչերով: Ինչպե՞ս եք վերաբերվում դրան:

- Դրական եմ վերաբերվում: Բոլոր իրական ընդդիմադիր ուժերը պետք է համախմբվեն, որովհետեւ ստեղծված իրավիճակը երկար շարունակվել չի կարող: Այսօր շատ քաղաքացիներ մոտենում են եւ ասում, որ հիասթափված են ընտրություններից, որովհետեւ համոզված են, որ իրենց ձայնը չի ազդում վերջնական արդյունքի վրա: Սա ամենավտանգավոր իրավիճակն է, երբ քաղաքացին կորցնում է հավատը ընտրական գործընթացի նկատմամբ:

- Վերջում մեկ հստակեցնող հարց. այս պահին ձեր պայքարը խորհրդարան անցնելու համա՞ր է, թե՞ իշխանափոխության:

- Մեր պայքարը ՀՀ-ի եւ հայկական պետականության պահպանման համար է: Ինչ վերաբերում է մանդատներին եւ քվեների վերականգնմանը, ապա սպասում ենք Սահմանադրական դատարանի որոշմանը: Դրանից հետո արդեն կհայտարարենք մեր հետագա դիրքորոշումն ու գործողությունները:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏԵԼ Է ԿԱՋՄԵՐԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունիսի 23-ին ստորագրել է N 550-Ու որոշումը, որով հաստատվել են «Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի» ղեկավար մարմինների ձեւավորման նպատակով ստեղծվող մրցութային հանձնաժողովների անհատական կազմերը:

Որոշմամբ ձեւավորվել են երկու առանձին մրցութային հանձնաժողովներ, որոնք պատասխանատու կլինեն հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների եւ գլխավոր տնօրենի ընտրության գործընթացների կազմակերպման համար:

Վարչապետի որոշման իրավական հիմք են հանդիսացել «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքը, ինչպես նաեւ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի համապատասխան դրույթները:

Փաստաթղթի համաձայն՝ հանձնաժողովները պետք է ապահովեն ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպումը եւ մրցութային ընթացակարգերի իրականացումը՝ օրենքով սահմանված կարգով:

Նշենք, որ Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը կարեւոր դեր է ունենալու Հայաստանում առողջապահական ապահովագրության համակարգի ներդրման եւ կառավարման գործընթացում, իսկ ղեկավար մարմինների ձեւավորումը համարվում է հիմնադրամի գործունեության մեկնարկային կարեւոր փուլերից մեկը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՉԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

Բաքվում ապօրինաբար պահվող հայ գերիները հայտարարել են, որ իրենց մեղավոր չեն համարում: «Վերաքննիչ բողոքների քննության ընթացքում» Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը հայտարարել է, որ չի ընդունում իրեն առաջադրված «մեղադրանքները»: Ապօրինաբար պահվող գերիների՝ Էրիկ Ղազարյանի, Գարիկ Մարտիրոսյանի, Լեւոն Բալայանի եւ Գուրգեն Ստեփանյանի փաստաբանները դատարանից պահանջել են նրանց նկատմամբ արդարացման դատավճիռներ կայացնել: Նրանք իրենց ելույթներում նույնպես հայտարարել են, որ չեն ընդունում մեղքը եւ համաձայն են իրենց պաշտպանների դիրքորոշման հետ:

ՀԱՅՏՆԻ Է՝ ՈՎ ԿՓՈԽԱՐԻՆԻ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել, համաձայն որի՝ Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին տրամադրվել է ամենամյա արձակուրդի մի մասը: Վարչապետի N 553-Ու որոշմամբ Սրբուհի Գալյանը 2026 թվականի հունիսի 29-ից մինչեւ հուլիսի 3-ը ներառյալ կգտնվի արձակուրդում: Խոսքը 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի 5 աշխատանքային օրվա մասին է: Հատկանշական է, որ արձակուրդին նախորդել է նախարարի պաշտոնական այցը Ռուսաստանի Դաշնություն: Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ վարչապետի մեկ այլ որոշմամբ՝ Սրբուհի Գալյանը հունիսի 23-26-ը գործուղվել էր Ռուսաստանի Դաշնություն՝ Սանկտ Պետերբուրգ, որտեղ մասնակցել է Պետերբուրգյան միջազգային իրավաբանական 14-րդ համաժողովին: Վարչապետի նոր որոշմամբ սահմանվել է նաեւ, որ Սրբուհի Գալյանի արձակուրդի ընթացքում արդարադատության նախարարի պարտականությունները կկատարի նախարարի տեղակալ Տիգրան Դադունցը:

Այսպիսով, Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցից անմիջապես հետո արդարադատության նախարարը կգտնվի արձակուրդում:

Ա. Վ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԵՆ

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ Ռուսաստանն ու Հայաստանը եղբայրական երկրներ են, եւ երկու պետությունների միջեւ առկա ինտեգրացիոն գործընթացը նպաստում է Հայաստանի տնտեսական զարգացմանը: Ինչպես փոխանցում է ՏԱՀ-ը, Պեսկովը նշել է, որ Ռուսաստանն ու Հայաստանը դարերով հարեւան եւ սերտ կապերով կապված երկրներ են: «Մենք սերտորեն փոխկապակցված ենք այս տեսանկյունից. մեր երկրում ապրում են բազմաթիվ հայեր, իսկ Հայաստանում՝ ռուսներ: Մեզ միավորում է շատ լավ ինտեգրացիոն գործընթացը: Մենք համոզված ենք, որ այդ գործընթացը՝ Եվրասիական տնտեսական միությունը, ամեն տարի զգալի ներդրում է ունենում Հայաստանի ՀՆԱ-ի աճի մեջ», - ասել է Պեսկովը: Նրա խոսքով՝ ԵԱՏՄ շրջանակում համագործակցությունը շարունակում է մնալ Հայաստանի տնտեսական զարգացման կարեւոր գործոններից մեկը:

ԻՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼ Է ՊԱԿԻՍՏԱՆԻՆ

Իրանը շնորհակալություն է հայտնում Պակիստանի իշխանություններին՝ Իսլամաբադի կողմից Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ հուշագրի կնքման համար ձեռնարկված միջնորդական ջանքերի համար: Այս մասին հայտարարել է Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանը: «Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունն ու ժողովուրդը շնորհակալ են Պակիստանի կառավարության եւ ժողովրդի ջանքերի, աջակցության եւ համերաշխության համար: Այս կարեւոր պահին, երբ տարածաշրջանը բախվում է բազմաթիվ մարտահրավերների, Պակիստանի պատասխանատու եւ հեռատես դերը երկխոսությանը աջակցելու, լարվածությունը նվազեցնելու եւ տարածաշրջանային կայունությունը ամրապնդելու գործում ցույց է տվել տարածաշրջանային գործընթացների նկատմամբ նրա եղբայրական եւ հեռանկարային մոտեցումը», - ասել է Փեզեշքիանը Պակիստանի վարչապետ Շահբազ Շարիֆի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ: Իրանի նախագահը վստահություն է հայտնել, որ ուժերը միավորելով՝ իսլամական երկրները կարող են տարածաշրջանում ստեղծել անվտանգության նոր ճարտարապետություն: «Այս համատեքստում կարեւոր երկրներ, ինչպիսիք են Կատարը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը եւ Թուրքիան, կարող են արդյունավետ դեր խաղալ այս տարածաշրջանային կառուցվածքի ձեւավորման գործում», - հավելել է նա: Փեզեշքիանը նաեւ նշել է Թեհրանի եւ Իսլամաբադի միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման մեծ ներուժը եւ ընդգծել, որ ստեղծված իրավիճակում հարաբերությունները կարող են նոր մակարդակի հասնել երկու երկրների ղեկավարների աջակցությամբ:

ԾԵԾՈՒՄ ԷՐ ԹԻՄԱԿՑԻՆ

Ո՞Վ Է ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ «ՆԵՏՎԱԾ» ԱՐՍԵՆ ՄԱԿՎԵՑՅԱՆԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախորդ օրը Երեւանի քաղաքապետարանում տեղի ունեցած աղմկահարույց միջադեպի ընթացքում ամենաակտիվ եւ աչքի ընկնող դեմքերից մեկը եղել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչության պետ Արսեն Մակվեցյանը:

Տարածված տեսանյութերում ակնհայտ երեւում է, թե ինչպես է բարձրաստիճան պաշտոնյան լարված իրավիճակում հայտնվել միջանցքում՝ ներգրավվելով քաշքշուկի եւ բախումների մեջ: Կադրերից տպավորություն է ստեղծվում, որ Մակվեցյանը ոչ թե փորձում է կանխել իրավիճակի սրացումը, այլ հակառակը՝ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տեղի ունեցող իրադարձություններին: Ավելին, տեսանյութում նկատելի է, որ ստեղծված խառնաշփոթի պայմաններում նա սկզբում գետնին է տապալում նույնիսկ իր թիմակցին, ինչից հետո քաղաքապետ Տիգրան Ավինյանի՝ «Արսեն, Արսեն, հանգիստ» կոչերից հետո միայն որոշ չափով զսպում է իր գործողությունները:

Սակայն այստեղ առաջանում է առավել կարեւոր հարցը. արդյո՞ք Երեւանի քաղաքապետարանի վարչության պետի գործառույթների մեջ մտնում է քաղաքական կամ ընդդիմադիր գործիչների հետ ֆիզիկական առճակատման մասնակցելը: Եւ արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնող անձի նման վարքագիծը համատեղելի է պետական ծառայողի կարգավիճակի հետ:

Իսկ ո՞վ է այս պաշտոնյան, որը հայտնվել էր քաղաքապետարանի միջանցքի իրադարձությունների կենտրոնում:

Արսեն Մակվեցյանը ծնվել է 1981 թվականի հուլիսի 25-ին՝ Երեւանում:

1998 թվականին ավարտել է Երեւանի թիվ 136 միջնակարգ դպրոցը,

1998-2002 թվականներին սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում,

2002-2004 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում,

2004-2007 թվականներին աշխատել է Քանաքեռ-Զեյթունի թիվ 1 մարզադպրոցում,

2007-2016 թվականներին աշխատել է «Դինամո» ՄՀԿ-ում,

2012-2013 թվականներին աշխատել է Արաբկիր վարչական շրջանում,

2013-2016 թվականներին աշխատել է Չինաստանի «Լիաոնինգ» ակումբում,

2018-2019 թվականներին աշխատել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում,

2019-2020 թվականներին եղել է Քաթարի ազգային հավաքականի գլխավոր մարզիչը,

2020-2021 թվականներին եղել է «Շվեյցարական Սպորտինգ» ակումբի գլխավոր մարզիչը,

2022 թվականին նշանակվել է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի եւ երիտասարդության հարցերի վարչության պետ:

Նախորդ օրվա միջադեպից հետո, սակայն, հանրության մի մասի համար Մակվեցյանի կենսագրության ամենահիշվող հատվածը ոչ թե նրա մարզական կամ վարչական գործունեությունն է, այլ քաղաքապետարանի միջանցքում արձանագրված վարքագիծը, որը դեռ երկար ժամանակ քննարկումների թեմա է մնալու:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՆՉԻՑ Է ԿԱԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

Իրանի վերակառուցման համար միջոցների հատկացումը կախված կլինի անվտանգության հարցերի լուծումից, եւ այդ կապիտալ ներդրումների համար ամերիկյան կառավարության կողմից ֆինանսավորում չի նախատեսվում: ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն այս հայտարարություններն արել է Աբու Դաբի (ԱՄԷ) ժամանելուն պես՝ Մերձավոր Արեւելքի շրջագայության շրջանակներում: «Սա հեռավոր ապագայի հարց է: Սա այն քննարկման մի մասն է, թե ինչ կարող է պատահել, եթե Իրանը, նրա ղեկավարությունը որոշեն, որ ցանկանում են լինել



երկիր, այլ ոչ թե հեղափոխական շարժում, որը արտահանում է ահաբեկչություն», - հայտարարել է նա լրագրողների հետ զրույցում՝ մեկնաբանելով Մերձավոր Արեւելքի արաբական երկրների՝ Թեհրանի համար ներդրումային հիմնադրամի ստեղծմանը մասնակցելու հեռանկարները: «Ես ասում եմ, որ եթե նրանք (իրանական իշխանությունները - խմբ.) կատարեն այս ընտրությունը, կլինեն բարենպաստ հնարավորություններ: Եւ այդ բարենպաստ հնարավորությունները կարող են ներառել ներդրումները: Ինչպես տարածաշրջանի մյուս երկրները օգտվել են ներդրումներից, ուղղակի արտասահմանյան ներդրումներից», - նշել է Ռուբիոն: «Սա մեր ներդրումը չի լինի, այլ մեր կառավարության փողը: Եվ դա կախված կլինի մի շարք անվտանգության հարցերի առաջընթացից, որոնք պետք է լուծվեն առաջիկա օրերին», - ասել է ԱՄՆ պետքարտուղարը:

Այս ներդրումային հիմնադրամի ստեղծումը նախատեսված է Վաշինգտոնի եւ Թեհրանի միջեւ ստորագրված փոխըմբռնման հուշագրով, որը նպատակ ունի ավարտել ԱՄՆ-Իրանց դեմ ԱՄՆ-Իսրայել պատերազմը: Հասանելի տեղեկությունների համաձայն՝ այս մասնավոր ներդրումային հիմնադրամի չափը կկազմի 300 միլիարդ դոլար, որի կեսից ավելին արդեն ապահովված է ներդրողների պարտավորություններով: Նշվել է, որ այս ֆինանսական մեխանիզմը չի ենթադրում պետական ֆինանսավորման կամ դրամաշնորհների օգտագործում. միջոցները կտրամադրվեն մասնավոր հատվածի կողմից: Ներդրողների թվում են ԱՄՆ-ից, Պարսից ծոցից, Ասիայից, Հարավային Ամերիկայից եւ Աֆրիկայից ընկերություններ:

ԱՆՑԱԿԵՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երեւանում հունիսի 23-ին անցկացվել է Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության սահմանային թողունակության աճին միտված հարցերի քննարկման նպատակով ձեւավորված աշխատանքային խմբի նիստը: Այս մասին տեղեկացնում են Էկոնոմիկայի նախարարությունից: «Այն նախագահել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Էդգար Զաքարյանը եւ Իրանի Իսլամական Հանրապետության ճանապարհների եւ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ռեզա Աքբարին: Նիստի օրակարգային հարցերի թվում են եղել ճանապարհային տուրքերի, լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաեւ սահմանային անցակետերի գործունեությանն առնչվող հարցեր: Էդգար Զաքարյանը նշել է, որ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը կարեւորում է Հայաստանի եւ Իրանի միջեւ առեւտրատնտեսական գործակցության շարունակական խորացումը եւ լոգիստիկ հնարավորությունների դիվերսիֆիկացումը: Նախարարի տեղակալը հույս է հայտնել, որ սահմանային ենթակառուցվածքների վերազինումն ու արդիականացումը լրացուցիչ խթան կլինեն փոխադարձ առեւտրաշրջանառության աճի համար: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀՀ-ում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Խալիլ Շիրղոլամին եւ ԻԻՀ-ում ՀՀ առեւտրական կցորդ Հայկ Նազարյանը»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄ

ԱՌԳՐԱՎՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՊԵՏԻ ԶԵՆՔԸ

Ոստիկանությունը առգրավվել է Մասիս քաղաքի հարկային ծառայության նախկին պետի զենքը: Մեսրոպ Արոյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանությանը Մեսրոպ Արոյանին պատկանող «BERETTA 92 FS» 9մմ 99 մմ թիվ BER 252265 Z սերիայով եւ համարով զործարանային վիճակի զենքը մալելուն ուղղված գործողություններից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին:



Հիշեցնենք, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախկին պատգամավոր, պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Վիլեն Գաբրիելյանը զենքի մասին օրենք էր բերել, որը Ազգային Ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ՝ 61 կողմ, 1 դեմ, 32 ձեռնպահ ձայներով ընդունել է: Խոսքը «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին է, որով՝ «Զենքի մասին» 1998 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-246 օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով զենքով պարգեւատրված անձինք մինչեւ 2025 թվականի հունիսի 1-ը պարտավոր են Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանություն ներկայացնել տվյալ անձի մոտ զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների բացակայությունը հավաստող բժշկական փաստաթղթեր, ինչպես նաեւ զենքի հետ կապված եւ անվտանգության կանոնների իմացության տեսական եւ գործնական քննությունները հանձնելու մասին փաստաթուղթ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԳՆ

ԲԻՇՔԵԿՈՒՄ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ

Հունիսի 18-ին Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Բիշքեկում տեղի է ունեցել ԱՊՀ անդամ պետությունների ներքին գործերի նախարարությունների մայրաքաղաքային ստորաբաժանումների ղեկավարների խորհրդակցությունը՝ միտված անչափահասների իրավունքների պաշտպանության եւ նրանց անվտանգության ապահովման հարցերին:

Խորհրդակցությանը մասնակցել են ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչության պետ, ոստիկանության գնդապետ Հայկ Հարությունյանը եւ նույն վարչության անձի հետախուզման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Աղվան Գրիգորյանը:

Մասնակցել են նաեւ ներքին գործերի նախարարությունների ներկայացուցիչներ Ռուսաստանի Դաշնությունից, Բելառուսից, Ղազախստանից, Տաջիկստանից, Ադրբեջանից, Թուրքմենստանից եւ Ուզբեկստանից: Խորհրդակցությունը վարել է Ղրղզստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Բիշքեկ քաղաքի գլխավոր վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ազամատ Տոկտոնալիեւը:

Քննարկումների ընթացքում մասնակից պետությունները ներկայացրել են անչափահասների իրավունքների պաշտպանության, նրանց անվտանգության ապահովման, ինչպես նաեւ այդ ուղղությամբ իրավապահ մարմինների համագործակցությանն առնչվող հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել միջազգային փորձի փոխանակմանը, արդյունավետ գործելակերպերի ուսումնասիրմանը եւ անչափահասների պաշտպանության ոլորտում համատեղ աշխատանքի զարգացմանը:

Ելույթով հանդես է եկել նաեւ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչության պետ Հայկ Հարությունյանը: Նա կարեւորել է անչափահասների իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցության դերը՝ ընդգծելով փորձի փոխանակման, օպերատիվ տեղեկատվության հասանելիության եւ գործընկերային կապերի ամրապնդման նշանակությունը:

Խորհրդակցության շրջանակում ՆԳՆ ոստիկանության ներկայացուցիչներն այցելել են Բիշքեկ քաղաքի ներքին գործերի մարմինների մի շարք ստորաբաժանումներ՝ փորձի ուսումնասիրման նպատակով:

Խորհրդակցության ավարտին Քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչության պետ Հայկ Հարությունյանը Ղրղզստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի կողմից պարգեւատրվել է շքանշանով:

ԼՈՒՐԵՐ

ՅՈՒՅՄՈՒՆՔ

ArmLur.am-ը շարունակում է հրապարակել ՊՊԾ աշխատակիցների ցուցմունքը Սուրբ Աննա եկեղեցում Նիկոլ Փաշինյանի եւ 18-ամյա Դավիթ Մինասյանի միջադեպի գործով: Ի՞նչ է նա հայտնել իրավապահներին. նախ՝ ամենասկզբից: 2026 թվականի մարտի 29-ին՝ Ծաղկազարդի օրը, Սուրբ Աննա եկեղեցում Փաշինյանի մասնակցությամբ միջադեպ էր եղել, Փաշինյանի թիկնապահները նախ երիտասարդին քաշելով ճանապարհ էին բացել, իսկ երբ երիտասարդը նշել էր, որ ցանկացել է իր տեղում կանգնած մնալ, վեճ էր եղել: Ավելի ուշ ոստիկանները ուժի կիրառմամբ եկեղեցուց բերման էին ենթարկել երիտասարդներին: Միջադեպի առթիվ նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով (խուլիգանությունը) եւ 452-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը): Սուրբ Աննա եկեղեցում Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ միջադեպի գործով 18-ամյա Դավիթ Մինասյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորում, ավելի ուշ փոխվեց բացակայելու արգելքը, գործը արդեն դատարանում է: Այս դեպքով ՀՀ քննչական կոմիտեում հարցաքննվել է ՊՊԾ կապիտան Գեւորգ Գալստյանը: Նա Սուրբ Աննա եկեղեցում Նիկոլ Փաշինյանի եւ 18-ամյա Դավիթ Մինասյանի միջադեպի գործով պատասխանել է քննիչի հարցերին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Ք. Մ.

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԽՈՒԶԱՐԿԵԼ

ՀՀ քննչական կոմիտեում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացված հաղորդման համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի կողմից 2026 թվականի հունվարի 5-ին տրված կատարողական թերթով արգելվել է Ի.Ս.-ին եւ նրա կնոջը՝ իրենց պատկանող գույքերի տնօրինման հետ կապված որեւէ գործողություն կատարել: Բացի այդ, դատարանի որոշմամբ 258 մլն 146 հզր 843 ՀՀ դրամի չափով պետք է արգելանք դնել Ի.Ս.-ին եւ Լ.Խ.-ին սեփականության իրավունքով պատկանող գույքերի վրա: Հարուցված կատարողական վարույթի ընթացքում 2026 թվականի փետրվարի 2-ին Ի.Ս.-ն հրաժարվել է ներկայացնել «Գույքի, եկամուտների եւ գույքային իրավունքների, այդ թվում՝ պահանջի իրավունքների կազմի, քանակի եւ գտնվելու վայրի մասին հայտարարագիր»:

2026 թվականի ապրիլի 28-ին Ի.Ս.-ն ներկայացրել է հայտարարագիր, որում ի թիվս այլի նշել է գույք, որը հանդիսանում է պարտադիր առգրավման ենթակա գույք: Տվյալ գույքի վրա դրվել է արգելանք: Ստացված հաղորդման հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 509-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի արարքը) հատկանիշներով: Բացի այդ, քրեական վարույթի նախաքննության ընթացքում քննիչի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա նախաձեռնվել է եւս մեկ քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 510-րդ հոդվածի 1-ին մասի (պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի եւ գույքային իրավունքների կազմի, քանակի եւ գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը) հատկանիշներով: Նշված քրեական վարույթները միացվել են: 2026 թվականի հունիսի 23-ին Ի.Ս.-ի բնակության վայրում, նրա կնոջը սեփականության իրավունքով պատկանող երկու տրանսպորտային միջոցներում կատարվել է խուզարկություն, որի ընթացքում հայտնաբերվել են արտարժույթի տեսքով դրամական միջոցներ եւ ոսկյա զարդեր: Նախաքննությունը շարունակվում է:

ԱՊՕՐԻՆԻ

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում ավարտվել է 3 անձի կողմից առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի ապօրինի իրացման փորձի վերաբերյալ քննված քրեական վարույթի նախաքննությունը: Քրեական վարույթի նախաքննության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված մեծածավալ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացիներ Ս.Հ.-ն, Ն.Մ.-ն եւ Ս.Հ.-ն 2025թ. դեկտեմբերին, նախնական համաձայնությամբ, փորձել են իրացման նպատակով ձեռք բերել մաքսանենգ ճանապարհով ՀՀ տեղափոխված առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 5.5 կգ քաշով «մարիխուանա» տեսակի թմրամիջոցը: Մասնավորապես՝ օտարազգի քաղաքացին սահմանով՝ Արաքս գետի վրայով մաքսանենգ ճանապարհով տեղափոխել է թմրամիջոցը եւ թաքցրել ՀՀ տարածքում, որից հետո Ս.Հ.-ի եւ Ն.Մ.-ի հետ ձեռք բերված պայմանավորվածության արդյունքում նրանցից մեկին է տրամադրել ՀՀ տարածքում նախապես թաքցված թմրամիջոցի գտնվելու վայրի մասին տվյալները, սակայն ՀՀ քաղաքացին թմրամիջոցը վերցնելու պահին հայտնաբերվել ու ձերբակալվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների կողմից: Ս.Հ.-ի, Ն.Մ.-ի եւ Ս.Հ.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քր. օր. 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի իրացնելու փորձը): Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը: 3 անձի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

● *Հունիսի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 12 հետախուզվող, կամավոր ներկայացել է 3-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆՎԱՋԵՑՐԵԼ ԵՆ

1996թ. փետրվարին սկսեցին գործել մարզպետարանները, Հայաստանի վարչական 37 շրջանները լուծարվել էին, մարզպետարանները մեծ դեր ունեին կառավարության եւ համայնքների միջեւ կապն իրականացնելու գործում: Խոշոր համայքների ձեւավորումից հետո մարզպետարանների՝ որպես կառավարության եւ համայնքների միջեւ միջնորդ օղակների դերը էապես նվազելէ: Մանավանդ, որ անցած 30 տարում կապի, հաղորդակցության նոր միջոցներ են ի հայտ եկել, մեծ հեռավորությամբ օնլայն քննարկումներ, խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ են անցկացվում: Վերջին տարիներին նվազել են մարզպետարանների գործառույթները: Մարզպետարանի անմիջական ենթակայությամբ ընդամենը 2 ոլորտ է գործում՝ մարզի պետական հանրակրթական դպրոցները եւ մարզի պետական բուժհիմնարկները: Վարժարանները եւ ավագ դպրոցները դուրս են բերվել մարզպետարանների ենթակայությունից, դրանք միայն ԿԳՄՍ նախարարությանն են ենթարկվում: 2025թ.-ին մարզերի քաղաքներում գործող պետական բժշկական հիմնարկները եւս դուրս են բերվել մարզպետարանների ենթակայությունից, դրանք առողջապահության նախարարության ենթակայությամբ են: Տավուշի մարզպետարանում 2 փոքր բարեփոխում է եղել՝ մարզպետարանը կոչվում է մարզպետի աշխատակազմ: Մարզպետարանի շենքի մուտքում ուղեփակոց է տեղադրվել, մարզպետարանի աշխատակիցը մարզպետարանի այցելուին հարցնում է, թե մարզպետի աշխատակազմի որ պաշտոնյայի մոտ, ինչ գործով է գնում: Մարզպետարանի աշխատակիցը ներքին կապով կապ է հաստատում մարզպետարանի համապատասխան պաշտոնյայի հետ եւ վերջինիս համաձայնության դեպքում թույլ է տալիս բնակչի մուտքը մարզպետարան:

Մարզպետարանների սուղ գործառույթներն ավելի են սահմանափակել: Հունիսի 18-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեսյանը հանդիպել է ՀՀ մարզպետների աշխատակազմերի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետերի հետ եւ նրանց հայտնել, որ «Հանրակրթության մասին» օրենքում իրականացված փոփոխությամբ հստակեցվել են նախարարության եւ մարզերի գործառույթները: Առաջիկա սեպտեմբերից մարզերի հանրակրթական դպրոցների բովանդակային կառավարման համակարգման գործառույթը կվերապահվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնին՝ ԿԳՄՍ նախարարությանը, իսկ վարչատնտեսական գործառույթն ամբողջությամբ կփոխանցվի մարզպետների աշխատակազմերին:

Անտրամաբանական է, որ Հայաստանի պետական կառավարման համակարգում ավելորդ օղակ դարձած, ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ կրկնվող գործառույթներ ունեցող մարզպետների աշխատակազմերը պետական պարտքի տակ կքած Հայաստանի պետական բյուջեից ոչ միայն բարձր աշխատավարձեր են ստանում, այլ նաեւ՝ մեծ պարգեւավճարներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ

ՈՐԴԻՆ ՊՆԴՈՒՄ Է, ՈՐ ՉԻ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՏԵՍԱԿՑԵԼ ՄՈՐԸ

ArmLur.am-ի խմբագրություն է դիմել Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բնակիչ Արա Հակոբի Կիրակոսյանը՝ ահազանգելով, որ տեւական ժամանակ է՝ չի կարողանում տեսակցել իր մորը՝ Անուշ Ավետիսյանին:

Արա Կիրակոսյանի հարազատների փոխանցմամբ՝ վերջինս մանկուց մեծացել է առանց հոր: Ըստ նույն աղբյուրի՝ Անուշ Ավետիսյանի մայրը ժամանակին դեմ է եղել դստեր ամուսնությանը եւ հետագայում միջամտել է ամուսնալուծության գործընթացին: Ազգականների հավաստմամբ՝ Արա Կիրակոսյանը երբեւէ տարաձայնություններ չի ունեցել մոր հետ եւ մշտապես հետաքրքրվել է նրա վիճակով, սակայն որոշ ժամանակ նրանց միջեւ կապը կորել է: Ավելի ուշ, տեղեկանալով, որ մայրը գտնվում է Արմաշի խնամքի կենտրոնում, նա դստեր հետ այցելել է նրան: Հարազատների խոսքով՝ այդ հանդիպումը ջերմ մթնոլորտում է անցել, եւ հետագայում տեսակցությունները շարունակական բնույթ են կրել: Արա Կիրակոսյանը ցանկացել է մորը դուրս գրել խնամքի կենտրոնից եւ տեղափոխել իր բնակարան, սակայն, նրա պնդմամբ, խնամքի կենտրոնից հայտնել են, որ նման իրավունք ունի միայն այն անձը, որը ներկայացրել եւ գրանցել է նրան որպես խնամող:

Ըստ հարազատների՝ Անուշ Ավետիսյանին խնամքի կենտրոն է ներկայացրել Ալվարդ Գաբրիելյան անունով մի կին, որը, ինչպես նշվում է, Արայի համար անծանոթ անձ է եղել: Արա Կիրակոսյանի հարազատների պնդմամբ՝ հետագայում պարզվել է, որ վերջինս հեռավոր բարեկամական կապ ունի ընտանիքի հետ: Արա Կիրակոսյանի հարազատները նաեւ պնդում են, որ Ալվարդ Գաբրիելյանը Անուշ Ավետիսյանին խնամքի կենտրոն տեղափոխելուց հետո տնօրինել է վերջինիս բնակարանի բանալիները եւ բնակարանը վարձակալության հանձնել: Բնակարանը գտնվում է Երեւանի Էրեբունի վարչական շրջանի Խաղաղ Դոնի փողոցի 19 բնակարան 274 հասցեի ներքո: (Բնակարանի հասցեն հրապարակում ենք հարազատների խնդրանքով):

Հարազատների խոսքով՝ վերջին շրջանում Արա Կիրակոսյանին հաջողվել է պարզել մոր գտնվելու վայրը եւ այցելել նրան, սակայն այս անգամ Անուշ Ավետիսյանը հրաժարվել է հանդիպել որդուն եւ թոռներին: Ըստ նրանց՝ մոր վերաբերմունքը կտրուկ փոխվել է, ինչը նրանք կապում են երրորդ անձանց ազդեցության հետ:

ArmLur.am-ին ահազանգած քաղաքացիները կասկած են հայտնում, որ Անուշ Ավետիսյանին պատկանող գույքի նկատմամբ կարող են լինել շահագրգռվածություններ: Նրանք պնդում են, որ Ալվարդ Գաբրիելյանի գործողությունների նպատակը կարող է լինել բնակարանի տնօրինումն ու դրանից եկամուտ ստանալը: Նշենք, որ գործի առնչությամբ ներկայումս ընթանում է դատական գործընթաց:

ArmLur.am-ը պատրաստ է հրապարակել նաեւ մյուս կողմի պարզաբանումներն ու դիրքորոշումը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հունիսի 23-ին ստորագրել է որոշում, որով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ 2026 թվականին Հայաստանի տարբեր բնակավայրերում արձանագրված կարկտահարությունների դեպքերն ուսումնասիրելու նպատակով: Վարչապետի N 547-Ու որոշման համաձայն՝ աշխատանքային խումբը պետք է ուսումնասիրի կարկտահարության դեպքերը, պարզի դրանց անոմալ (անկանոն) լինելու հիմնավորվածությունը, գնահատի բնական երեւույթի հետեւանքով քաղաքացիներին եւ տնտեսություններին հասցված վնասների քանակական ու ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաեւ վերլուծի հակակարկտային կայանների կիրառման արդյունավետությունը: Մասնավորապես, աշխատանքային խումբը պետք է գնահատի, թե կարկտահարության վայրերում կամ դրանց հարակից տարածքներում կարկուտ տեղալուց առաջ կամ դրա ընթացքում գործարկվել են արդյոք հակակարկտային կայաններ, եւ եթե այո, ապա ինչ ազդեցություն են ունեցել դրանք բնական երեւույթի ընթացքի եւ հետեւանքների վրա: Որոշմամբ սահմանվել է նաեւ, որ աշխատանքային խմբի ղեկավարն իրականացված աշխատանքների արդյունքների վերաբերյալ մեկշաբաթյա ժամկետում պետք է զեկուցի վարչապետին:

Նշենք, որ վերջին շաբաթներին Հայաստանի մի շարք մարզերում գրանցված ուժեղ կարկտահարությունները զգալի վնասներ են հասցրել գյուղատնտեսությանը, ինչի հետեւանքով հանրային քննարկումների առարկա է դարձել հակակարկտային պաշտպանության համակարգերի արդյունավետության հարցը: Ստեղծված աշխատանքային խումբը պետք է ներկայացնի ուսումնասիրությունների արդյունքներն ու գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հետագա որոշումների ընդունման համար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿՓՈԽՎԻ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2026 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնում «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-104-Ն օրենքը, որով փոփոխվում է չվճարված հարկային պարտավորությունների գանձման ընթացակարգը: Այդ մասին հայտնում են ՊԵԿ-ից: Նոր կարգավորմամբ հարկային պարտավորության առաջացման օրը հարկ վճարողին կուղարկվի հիշեցում՝ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով: Եթե հիշեցումն ուղարկելուց հետո 7 օրացուցային օրվա ընթացքում հարկային պարտավորությունը չմարվի, իսկ հարկ վճարողի կողմից ներկայացված առարկությունները չընդունվեն կամ առարկություններ չներկայացվեն, հարկային մարմինը նույն օրը կընդունի ինչպես չվճարված հարկային պարտավորությունը գանձելու, այնպես էլ չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների եւ օրենքով սահմանված կարգով գրանցման կամ հաշվառման ենթակա շարժական ու անշարժ գույքի նկատմամբ արգելանք կիրառելու վերաբերյալ որոշումներ: Եթե արգելանքի կիրառման օրվանից հետո 30 օրվա ընթացքում հարկային պարտավորությունը չմարվի, հարկային մարմնի կողմից ընդունված որոշումները կներկայացվեն Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն՝ հարկադիր կատարման նպատակով:

Պետական եկամուտների կոմիտեն հորդորում է հարկ վճարողներին պարբերաբար հետեւել իրենց հարկային պարտավորությունների կատարմանը եւ դրանք կատարել օրենքով սահմանված ժամկետներում՝ հարկադիր միջոցառումների կիրառումը բացառելու համար:

● *Հանրապետությունում հունիսի 22-ից 23-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 11 դեպք:*

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՅՈՒՆԻԲԱՆԿՈՒՄ ԱՅԺՄ ԿԱՐԵԼԻ Է ԳՐԱՆՑԵԼ ԱՁ ԵՎ ՍՊԸ

Բիզնեսի գրանցումը սեփական գործ սկսելու առաջին քայլն է: Սակայն սկսնակ ձեռնարկատերերը հաճախ բախվում են մի շարք հարցերի՝ ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ, որքան ժամանակ կպահանջվի գրանցման համար եւ ինչպես կազմակերպել բանկային սպասարկումը:

Յունիբանկի հետ բիզնես սկսելը դարձել է արագ եւ հեշտ: Անհատ ձեռնարկատիրոջ կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) գրանցումը, ինչպես նաեւ բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի ստացումը հնարավոր է իրականացնել անմիջապես Յունիբանկի մասնաճյուղերում:

Նոր ծառայությունը նախատեսված է նրանց համար, ովքեր ցանկանում են սեփական գործ սկսել՝ առանց ժամանակի կորստի: Ծառայության շրջանակում հնարավոր է գրանցել իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր՝ տիպային եւ ոչ տիպային կանոնադրություններով, ինչպես նաեւ կատարել փոփոխություններ գրանցման տվյալներում՝ թարմացնել անձնագրային տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը եւ այլ տեղեկությունները:

Ձեռնարկատերերին տրամադրվում է համալիր աջակցություն՝ փաստաթղթերի ներկայացումից եւ ընկերության գրանցումից մինչեւ բանկային հաշվի բացում եւ անհրաժեշտ ծառայությունների մատուցում: Հաճախորդներին առաջարկվում է բիզնես քարտ, իրավաբանական անձանց համար նախատեսված UNIBusiness Mobile հավելված եւ «Ինտերնետ բանկ-Հաճախորդ» համակարգ, էքվայրինգի ծառայություններ՝ շարժական եւ վիրտուալ POS տերմինալների անվճար տրամադրմամբ, ինչպես նաեւ շահավետ պայմաններ աշխատավարձային նախագծերի շրջանակում:

Գործընթացը կազմակերպված է այնպես, որ հաճախորդը նվազագույն ժամանակ ծախսի եւ կարողանա կենտրոնանալ իր բիզնեսի զարգացման վրա: Բիզնեսի գրանցման ծառայության գործարկումը դարձավ Յունիբանկի ռազմավարության իրականացման հերթական քայլը՝ ուղղված փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանն ու հաճախորդների համար ժամանակակից ու հարմար լուծումների տրամադրմանը: Այժմ ամբողջ գործընթացը՝ ընկերության գրանցումից մինչեւ բանկային ծառայությունների մատուցումը, կարելի է կազմակերպել մեկ վայրում՝ մասնագիտական ուղեկցությամբ:

Գրանցման ծառայությունը հասանելի է ռեզիդենտների եւ ոչ ռեզիդենտների համար: *(Գ)*

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ԲԱՆԿԻՆԳՆ ՈՒ ԹՎԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆ

Թվային տեխնոլոգիաներն արմատական փոփոխությունների են ենթարկել բանկային համակարգն ու հաճախորդների սպասարկման մոտեցումները: Եթե նախկինում բանկը վայր էր, որտեղ մարդիկ այցելում էին, արդա այսօր այն «գործիք» է հաճախորդների գրպանում: Այս եւ այլ միտումների մասին խոսելու ենք Ֆասթ Բանկի մանրածախ բիզնեսի տնօրեն Տիգրան Սարգսյանի հետ:

- Պարոն Սարգսյան, այսօր բանկերը ենթարկվում են թվային վերափոխման եւ դուրս են եկել պահպանողական կառույցի դերից, հնարավոր համարո՞ւմ եք ապագայում ֆինանսական ծառայությունների մատուցումն ամբողջությամբ տեղափոխվի թվային հարթակներ:

- Թվային տեխնոլոգիաներն իսկապես շատ արագ փոխել են բանկային ոլորտը, եւ վերջին տարիներին հաճախորդները նախընտրում են ավելի շատ իրենց գործարքները կատարել հեռավար եղանակով, հիմնականում բանկային հավելվածների միջոցով: Եվ սա միտում է, որը կշարունակի ավելի զարգանալ առաջիկա տարիներին եւս: Միեւնույն ժամանակ կարծում եմ, որ կենդանի շփումը հաճախորդների հետ եւ խորհրդատվությունը մասնաճյուղերում կշարունակի ակտուալ մնալ եւ պահանջված լինել, մանավանդ ավելի բարդ ֆինանսական գործարքների պարագայում:

Ֆասթ Բանկում մենք փորձում ենք համատեղել այս երկու մոտեցումները, փորձում ենք մեր ծառայությունները մաքսիմալ տեղափոխել թվային հարթակներ՝ նպատակ ունենալով, որպեսզի գործարքների բացարձակ մեծամասնությունն իրականացվեն թվային հարթակներում, բայց միեւնույն ժամանակ փորձում ենք մեր 39 մասնաճյուղերում, որոնք սփռված են հանրապետության ամբողջ տարածքում, մենք ներկայացված ենք թե՛ Երեւանում, թե՛ բոլոր մարզերում, մատուցել բարձրակարգ խորհրդատվություն եւ սպասարկում:

- Ինչպե՞ս է փոխվում հաճախորդի վարքագիծը թվային տեխնոլոգիաների զարգացման պայմաններում, եւ ինչպե՞ս է Ֆասթ Բանկը հարմարվում այդ փոփոխություններին:

- Մենք մշտապես հետեւում ենք մեր հաճախորդների վարքագծին եւ բանկային ծառայություններից օգտվելու իրենց նախասիրություններին՝ փորձելով ավելի լավ հասկանալ նրանց պահանջմունքները: Եթե նախկինում հաճախորդները հարմարվում էին բանկերի պրոցեսներին, ապա այսօր իրավիճակը փոխվել է: Բանկերը փորձում են առավելագույնս հասկանալ հաճախորդների կարիքները եւ նրանց մատուցել լավագույն փորձառություն: Ժամանակակից հաճախորդն առաջին հերթին ակնկալում է ժամանակի խնայողություն, արագություն եւ պարզություն, եւ ապագայում կհաջողի այն բանկը, որն իր ծառայությունները եւ մոտեցումները կկառուցի այս սկզբունքների շուրջ: Ֆասթում մենք հիմքում հենց դնում ենք այս սկզբունքները՝ փորձելով հաճախորդներին մատուցել լավագույն փորձառություն, իրենց ժամանակի խնայողության եւ պարզ լուծումներ առաջարկելու միջոցով:

- Պարոն Սարգսյան, Հայաստանում բանկային ոլորտը բավական մրցակցային է: Ըստ Ձեզ ո՞րն է այսօր Ֆասթ Բանկի հիմնական մրցակցային առավելությունը կամ առավելությունները:

- Հայաստանի բանկային համակարգն իրապես շատ մրցակցային է՝ հաշվի առնելով գործող 17 առեւտրային բանկերը եւ շուկայի համեմատաբար ոչ մեծ լինելը: Այս պայմաններում հաջողելու համար շատ կարեւոր է ունենալ հստակ տարբերվող ռազմավարություն: Ֆասթ Բանկի հիմնական առավելությունն են արագությունն ու հասանելիությունը, մենք փորձում ենք մեր ծառայությունները կառուցել այնպես, որպեսզի հաճախորդներն առավելագույնս արագ եւ իրենց հարմար վայրում ստանան անհրաժեշտ ֆինանսական լուծումներ: Միեւնույն ժամանակ Ֆասթ Բանկը շուկայում համեմատաբար նոր բանկ է, դա մեզ թույլ է տալիս առաջարկել հաճախորդներին համեմատաբար նոր մոտեցում եւ թարմ լուծումներ: Այս տրամաբանության մեջ կարեւոր հանգամանք է, որ Ֆասթ Բանկի մասնաճյուղերը գործում են 24/7 սկզբունքով՝ մեր ծառայությունները դարձնելով էլ ավելի հասանելի մեր հաճախորդներին:

- Պարոն Սարգսյան, այսօր տեխնոլոգիական ընկերությունները, «fintech» լուծումները նույնպես ակտիվորեն մտնում են ֆինանսական ոլորտ: Ձեր կարծիքով՝ բանկերը ավելի շատ մրցակցելո՞ւ են այդ ընկերությունների հետ, թե՞ համագործակցելու:

-Այսօր կարելի է ասել, որ բանկերն արդեն ադապտացվել են «fintech» ընկերությունների հետ մրցակցությանը եւ մենք ավելի ու ավելի շատ ենք տեսնում, որ բանկային ոլորտը եւ «fintech» ոլորտը փոխլրացնում են միմյանց: Այս կոնտեքստում նաեւ շատ կարեւոր է «Open banking»-ի շարունակական զարգացումը, որը հնարավորություն է տալիս այս ոլորտում ներդնել նոր, նորարարական գործիքներ բանկերի եւ այլ ֆինանսական կազմակերպությունների ինտեգրման միջոցով: Այս կոնտեքստում նաեւ կարեւոր է այսպես ասած «Embodied finance» մոտեցումը, որը հնարավորություն է տալիս բանկերին իրենց ծառայությունները հասանելի դարձնել այլ հարթակներում, ու կարող եմ ասել, որ Ֆասթ Բանկն այս ուղղությամբ արդեն իսկ ունի իրականացված հաջող նախագծեր:

- Ո՞րն է Ֆասթ Բանկի հիմնական տեսլականը հաճախորդների սպասարկման ոլորտում:

- Ֆասթ Բանկի տեսլականը՝ լինել ունիվերսալ եւ ժամանակակից Բանկ, որը կարողանում է համադրել լավագույն տեխնոլոգիական լուծումները հաճախորդներին անհատականացված ֆինանսական գործիքներ առաջարկելու նպատակով:

- Եվ եթե նայենք առաջիկա տարիներին, ինչպիսի՞ն եք պատկերացնում մանրածախ բանկինգի զարգացումը Հայաստանում:

- Կարծում եմ առաջիկայում մանրածախ բանկինգն ավելի շատ գնալու է հաճախորդների համար անհատականացված եւ լոյալության վրա հիմնված լուծումների զարգացման եւ ներդրման ուղղությամբ: Հաճախորդներն ակնկալելու են ոչ թե ստանդարտացված բանկային պրոդուկտներ, այլ յուրաքանչյուրն իր ակնկալիքներին եւ վարքագծին համապատասխանեցված լուծումներ:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Պորտուգալիայի ազգային հավաքականի ավագ Կրիշտիանու Ռոնալդուն անդրադարձել է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության հետ խաղում գրանցված ոչ-ոքիից (1-1) հետո իր հասցեին հնչած քննադատություններին, գրում է armsport-ը: Ինչպես հայտնի է, 41-ամյա հարձակվողը դուբլի հեղինակ էր դարձել Ուզբեկստանի ընտրանու դեմ երեքշաբթի՝ հունիսի 23-ին կայացած խաղում, որտեղ պորտուգալացիները ջախջախիչ հաղթանակ էին տարել 5-0 հաշվով: «Ես գիտեմ, որ Աստված օգնում է նրան, ով աշխատում է: Դժվար, մռայլ շաբաթ էր: Այնպիսի տպավորություն էր, կարծես ավարտում էի կարիերաս: Բայց ես համառեցի, ինչպես միշտ, քանի որ ես ավելի շատ եմ հավատում աշխատանքին, քան ֆուտբոլին: Դժվար էր, պետք է խոստովանեմ, բայց մենք վերադարձանք»,- ասել է Ռոնալդուն խաղից հետո տված հարցազրույցում: Հիշեցնենք, որ աշխարհի առաջնության խմբային փուլի երկու տուրերից հետո Պորտուգալիայի հավաքականն իր ակտիվում ունի 4 միավոր: Երրորդ տուրում Ռոբերտո Մարտինեսի գլխավորած թիմն ուժերը կչափի Կոլումբիայի ընտրանու հետ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

Eventhub

AI ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ՇԱՏ ԱՎԵԼԻՆ

Միջոցառումների տոմսերի վաճառքի Eventhub հարթակն ընդլայնում է հնարավորությունները՝ տեղական շուկայի գնորդների եւ միջոցառումների կազմակերպիչների համար հասանելի դարձնելով եվրոպական շուկան:

Մասնավորապես, համագործակցելով Ֆրանսիայի, Գերմանիայի, Բելգիայի, Նիդերլանդների, Իսպանիայի եւ այլ երկրների գործընկերների հետ, Eventhub-ը տրամադրում է տեխնիկական աջակցություն եւ տոմսերի հասանելիություն տվյալ երկրներում տեղի ունեցող հայկական միջոցառումների համար: Համագործակցության արդյունքում արդեն իսկ իրականացվել են «Վիտամին ակումբի» եվրոպական շրջագայության, ինչպես նաեւ «Նոա» ֆուտբոլային ակումբի մի շարք արտագնա խաղերի տոմսերի վաճառքները:

Ամերիաբանկի դուստր ընկերության՝ Դիննոյի կողմից ներդրված Eventhub հարթակն արդեն իսկ համագործակցում է Վրաստանի միջոցառումների ոլորտի առաջատար կազմակերպությունների՝ tkt.ge-ի, biletebi.ge-ի եւ Starring Georgia-ի հետ: Համագործակցության արդյունքում հայ օգտատերերը հնարավորություն են ստացել ձեռք բերել տարածաշրջանի ամենապահանջված միջոցառումների՝ Kanye West-ի, Tom Odell-ի, Moby-ի, Ricky Martin-ի համերգների, Tbilisi Open Air փառատոնի, Մանկական Եվրատեսիլի տոմսերը:

Միաժամանակ, վրացի գործընկերների միջոցով իրականացվել են Հայաստանում կազմակերպվող մի շարք միջոցառումների՝ Լարա Ֆաբիանի, Արկադի Դումիկյանի, Արմենչիկի համերգների եւ մի շարք այլ միջոցառումների տոմսերի վաճառք: «Մենք շարունակում ենք կառուցել ամբողջական էկոհամակարգ, որը միավորում է կազմակերպիչներին, արտիստներին, գործընկերներին եւ միջոցառումների սիրահարներին: Մեր նպատակն է ստեղծել վստահելի տեխնոլոգիական միջավայր, որտեղ թե՛ տեղական, թե՛ միջազգային միջոցառումների կազմակերպման, տոմսերի վաճառքի եւ անցկացման գործընթացը կլինի առավել հեշտ, արագ եւ հասանելի»,-նշում է Eventhub-ի պրոդուկտի ղեկավար Էլեն Ղազարյանը:

Ընկերությունն այսօր ակտիվորեն զարգացնում է AI գործիքները՝ լայնորեն կիրառելով դրանք մարքեթինգի, ծրագրավորման, վերլուծության եւ բիզնես գործընթացների կառավարման ուղղություններում՝ էականորեն բարձրացնելով թիմի արդյունավետությունն ու մի քանի անգամ բազմապատկելով ծառայությունների մատուցման արագությունը: Այս մոտեցման շնորհիվ ավելի քան 30 գործիք եւ հարթակ ստեղծվել է AI օգնականների միջոցով:

Eventhub-ի կարեւոր նորամուծություններից է նաեւ կայքում եւ Telegram-ում գործող AI+ օգնական Նարեն, որը հնարավորություն է տալիս ստանալ տեղեկատվություն միջոցառումների, տոմսերի եւ պատվերների վերաբերյալ վայրկյանների ընթացքում:

Հարթակը շարունակում է կատարելագործել նաեւ տեխնոլոգիական հնարավորությունները: Վերջին ամիսներին հարթակում ներդրվել են մի շարք նոր հնարավորություններ՝ Add to Calendar, Share Event, միջոցառումների գնահատման համակարգ, «Ձեզ կարող է հետաքրքրել» առաջարկությունների բաժին եւ այլն:

Eventhub-ում արդեն կարելի է տեսնել նաեւ փորձառությունների (կինո, արվեստ, գաստրոնոմիա, արկածներ...) կատեգորիան: Մոտ ժամանակներս հարթակում հասանելի կլինեն նաեւ այլ հնարավորություններ՝ ապահովելով հաճախորդների երեկոն պլանավորելու ամբողջական փորձառություն:

Զարգացման հաջորդ կարեւոր քայլը Eventhub.Yerevan միջոցառումների տարածքի բացումն է, որը գտնվում է Երեւանում՝ Ավետիս Ահարոնյան 3/8 հասցեում: Այս վայրը նախատեսված է համերգների, ստեղծագործական միջոցառումների համար: Առաջին միջոցառումն արդեն իսկ տեղի է ունեցել հունիսի 14-ին, առաջիկայում տարածքը կհյուրընկալի տարբեր ձեւաչափերի նախագծեր:

Eventhub-ը հասանելի է ինչպես վեբ կայքի, այնպես էլ Ամերիաբանկի MyAmeria հավելվածի միջոցով:

Eventhub-ի մասին

Eventhub հարթակն Ամերիաբանկի դուստր ընկերության՝ «Դիննո» ՓԲԸ-ի պրոդուկտն է, որը գործարկվել է 2023-ին: Հարթակը պարզեցնում է միջոցառումների կազմակերպումը՝ տրամադրելով տոմսերի վաճառքի, նստատեղերի ընտրության եւ ստուգման պրոցեսի պարզեցված լուծումներ:

ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

Ամերիկացի հեռուստաաստղ եւ գործարար Քորթնի Քարդաշյանը սոցիալական ցանցերում կիսվել է ընտանեկան նոր լուսանկարներով, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել նրա հետեւորդների շրջանում:

Instagram-ում հրապարակված լուսանկարների շարքում առանձնահատուկ ուշադրություն է գրավել մի կադր, որտեղ սեւ-սպիտակ լուսանկարում Փենելոփեն պառկած է հատակին եւ զբաղված է պլանշետով, մինչդեռ Ռեյնը պառկել է նրա վրա: Փոքրիկ Ռոքին էլ նստել է եղբոր վրա՝ ստեղծելով ընտանիքի անդամների միջեւ ջերմ հարաբերությունները արտացոլող հուզիչ եւ միաժամանակ զվարճալի տեսարան: 47-ամյա Քարդաշյանը լուսանկարների շարքը մակագրել է «June gloom» («Հունիսյան մռայլություն») արտահայտությամբ՝ ներկայացնելով հունիսյան օրերի իր ընտանեկան հիշողությունները:

Հրապարակված լուսանկարներում տեղ են գտել նաեւ մայր ու որդի միասին անցկացրած գեղեցիկ պահեր: Մի նկարում Քորթնին եւ Ռոքին զբոսնում են ծովափին, իսկ մեկ այլ կադրում նրանք այցելել են ճաշարան: Այդ լուսանկարում Քորթնին հայելու դիմաց սելֆի է անում, մինչդեռ Ռոքին նստած է նրա գրկում: Փոքրիկը կրում է մոխրագույն նախշավոր շապիկ, իսկ Քորթնին՝ սեւ հագուստ եւ նոր սանրվածք՝ խոպոպներով:

Քորթնի Քարդաշյանը Ռոքիին լույս աշխարհ է բերել 2023 թվականին: Հայրը իր ամուսինն է՝ հայտնի երաժիշտ եւ Blink-182 խմբի թմբկահար Թրեւիս Բարքերը: Քարդաշյանը նախկինում երկար տարիներ հարաբերությունների մեջ է եղել Սքոթ Դիսիքի հետ, ումից ունի եւս երեք երեխա՝ 16-ամյա Մեյսոն Դիսիքին, 13-ամյա Փենելոփե Դիսիքին եւ 11-ամյա Ռեյն Դիսիքին:

Իր հերթին Թրեւիս Բարքերը եւս բազմազավակ հայր է: Նա ունի որդի՝ Լենդոն Բարքերը, դուստր՝ Ալաբամա Բարքերը եւ խորթ դուստր՝ Ատիանա Դե Լա Հոյան:

Ռոքիի մասնակցությամբ վերջին լուսանկարները հրապարակվել էին նաեւ մայիսի վերջին: Այդ նկարներում հատկապես ուշադրություն էր գրավել փոքրիկի երկար, գանգուր մուգ մազերը: Լուսանկարներից մեկում նա կանգնած էր օվկիանոսի տեսարանով տան պատշգամբում՝ ձեռքին պահելով կարմիր եւ կապույտ թմբկափայտեր: Թվում է՝ Ռոքին արդեն իսկ հետեւում է հոր երաժշտական ճանապարհին: Նախորդ տարի Թրեւիս Բարքերը PEOPLE ամսագրին տված հարցազրույցում պատմել էր, որ որդին գրեթե ամբողջ օրը զբաղված է երաժշտությամբ: «Նա անընդհատ թմբուկ է նվագում՝ բառացիորեն 24 ժամ, շաբաթը 7 օր: Արդեն սկսել է նաեւ կիթառ նվագել եւ հետաքրքրվում է տարբեր երաժշտական գործիքներով»,-նշել էր երաժիշտը:

ԼՈՒՐԵՐ

ԿՅԱՆՔԻ ԵՐՋԱՆԻԿ ՓՈՒԼԵՐԻՑ Է ԵՂԵԼ

Դերասանուհի Իրինա Դանիելյանը Կենտրոն հեռուստաընկերության եթերում խոսել է իր եւ դերասան Հրանտ Թոխատյանի հարաբերությունների եւ համատեղ կյանքի մասին: «Իմ կյանքի բոլոր փուլերը եղել են ուրախ եւ երջանիկ, այդպիսիներից է եղել Հրանտ Թոխատյանի հետ իմ ամուսնությունը: Երբ կյանքի այդ փուլում ես ապրում, քեզ թվում է՝ դա ամենաերջանիկն է, հետո երբ այդ փուլը վերջանում է, քեզ թվում է ամեն ինչ մնաց անցյալում, հետո գալիս է մի ուրիշ փուլ, որտեղ էլի քեզ երջանիկ ես զգում: Ե այդպես առ այսօր, հետադարձ հայացք գցելով ստացվում է, որ ես իմ կյանքի ամեն փուլը, այդ թվում Հրանտը, երջանիկ ապրելով եկել հասել եմ այսօրվան: Ափսոսանքի զգացում եւ չասված խոսքեր չկան, ապրում ենք թեթեւ, իրար հարգելով եւ սիրելով: Ինձ թվում է, եթե երեխան չլիներ եւ մենք ավելի շուտ ամուսնալուծվեինք, մենք միեւնույն է կմնայինք ընկերներ: Իմ բոլոր նախկիններն էլ այսօր իմ ընկերներն են»,- անկեղծացել է դերասանուհին:

ԿՈՇՏ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ

UFC-ի թեթեւ քաշային կարգի վարկանիշային աղյուսակի երկրորդ համար Արման Ծառուկյանը պատասխանել է UFC-ի մինչեւ 84 կգ քաշային կարգի նախկին չեմպիոն, նիգերիացի Իսրայել Ադեսանյայի դիտողությանը, գրում է armsport-ը: Վերջինս քննադատել էր հայ մարտիկին սթրիմերին հաճախակի մասնակցելու համար: «Ես պարզապես մի քանի անգամ միացել եմ սթրիմի: Բայց, լսեք, երբ ես մենամարտ ունեմ նշանակված, ամբողջությամբ կենտրոնանում եմ նախապատրաստության վրա, իսկ երբ չունեմ՝ հանգստանում եմ եւ վայելում կյանքը: Դա ավելի լավ է, քան խմելը, Ադեսանյա: Ավելի լավ է սթրիմ անել, քան խմել»,- Ծառուկյանի խոսքերն է մեջբերում Bloody Elbow պորտալը:

Նշենք, որ Արման Ծառուկյանը 29 տարեկան է: Խառը մենամարտերում հայ մարտիկի պրոֆեսիոնալ ռեկորդը ներառում է 23 հաղթանակ (որոնցից 15-ը՝ ժամանակից շուտ) եւ 3 պարտություն: Որպես պրոֆեսիոնալ մարտիկ՝ նա իր նորամուտը նշել է 2015 թվականի սեպտեմբերին, իսկ աշխարհի ուժեղագույն լիգայում՝ UFC-ում, հանդես է գալիս 2019 թվականի ապրիլից: Նա ազատ ոճի ըմբշամարտի եւ MMA-ի սպորտի վարպետ է:

● *Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հունիսի 27-ին՝ ժամը 18:00-ին, կկայանա «Կարմեն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ովքե՞ր եւ ե՞րբ կարող են անվճար այցելել թանգարաններ:

Վիտալի Վարդանյան, 74 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11.04.2023 թ. N 492-Ա/2 հրամանի՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայության թանգարաններ մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություն է սահմանված հետեւյալ խմբերի համար՝

Հայաստան ժամանած պետական պաշտոնական պատվիրակությունների անդամների,

Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների,

Թանգարանների միջազգային խորհրդի անդամների (ԻԿՕՄ) համար,

թանգարանային աշխատողների,

երկկողմանի ծնողազուրկ 12 տարեկանից բարձր տարիքի երեխաների,

հատուկ խնամքի եւ կենցաղային սպասարկման կարիք ունեցող ծերերի,

Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների (Հայաստանի Հանրապետության եւ նախկին ԽՍՀՄ պետությունների),

հաշմանդամություն ունեցող՝ 1-ին խմբի (ուղեկցողի հետ), հաշմանդամություն ունեցող՝ 2-րդ եւ 3-րդ խմբերի (առանց ուղեկցողի),

աղքատության (ընտանեկան) նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուների,

բազմազավակ ընտանիքների 12 տարեկանից բարձր երեխաների,

ժամկետային զինծառայողների,

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների 12 տարեկանից բարձր դպրոցական տարիքի երեխաների (նախօրոք ներկայացված հայտերի հիման վրա),

լրագրողների՝ աշխատանքային բոլոր օրերին (անձը եւ կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում):

Նույն հրամանով սահմանված է նաեւ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը թանգարանների մուտքն ազատ է:

ՀՀ ԿԳՄՍ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ր իրավիճակը կարող է համարվել շահերի բախում, եւ ի՞նչ կարող է ներառել պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը:

Հասմիկ Հակոբյան, 58 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Լայն իմաստով՝ շահերի բախումը պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերի եւ հանրային շահի միջեւ կոնֆլիկտն է: Ազգային օրենսդրությունն անդրադառնում է շահերի բախմանը հանրային հարաբերությունների ամենատարբեր ոլորտներում եւ նախատեսում կարգավորումներ հանրային ծառայության տեսակները կարգավորող ոլորտային օրենքների, այլ իրավական ակտերի շրջանակներում: Այդուհանդերձ, հանրային պաշտոն եւ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքությանն առնչվող հարցերը, նախ եւ առաջ, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, որը շահերի բախումը սահմանում է որպես իրավիճակ, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ եւ օբյեկտիվ կատարման վրա: Իր հերթին՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահի ներքո հասկացվում է որեւէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաեւ այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արտակարգ դեպք Արմավիրի մարզում. Դալարիկ գյուղում բախվել են բեռնատար գնացքն ու դիզվառելիք տեղափոխող «ԿամԱԶ»-ը: Վերջինը կոտրել է բետոնե սյունն ու կողաշրջվել. կա վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 7 + 12 + 20 + 25
	Կոտայքի լեռներ	+ 6 + 10 + 20 + 24
	Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 25 + 28
	Գեղարքունիք	+ 7 + 11 + 18 + 22
	Լոռի	+ 7 + 12 + 22 + 25
	Տավուշ	+ 8 + 12 + 22 + 25
	Արագածոտնի լեռներ	+ 5 + 10 + 19 + 23
	Արագածոտնի նախալեռներ	+ 11 + 16 + 24 + 29

	Արարատ	+ 14 + 17 + 28 + 30
	Արմավիր	+ 16 + 19 + 29 + 32
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 18 + 22
	Վայոց ձորի նախալեռներ	+ 15 + 19 + 29 + 32
	Սյունիքի լեռներ	+ 6 + 10 + 18 + 21
	Սյունիքի նախալեռներ	+ 12 + 15 + 22 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 29 + 32
	Երեւան	+ 16 + 18 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*